

ՖՈՏՈՐՄԱՆՈՎ

X

ՅԵՐԵՎԱՆ ՄԱՀՍԱԳԱՏԻԺ

ՀԱՏՎԱԾ «ԶԱՊԱՑԵՎ» ՎԵՐԻՑ

Թարգ. ԳՐԱԲԻՈՍ

ՅԵՐԵՎԱՆ
1980

ԳՈՐԾՎԱԿԱՑ

ԹՎՅԱԼՔԱՆԱՐ ԳԵՐԵԶ

ՏԱՏԵԱ ՇԱՄԱՐՄԱ «ԱՐԺԵՎ»

ԱՅԻ ԱՐԺԵՎ ՀԱՅ

ՔՈՒՐՔԱՆՈՑ

ՅԵՐԵՒՔ ՄՈՀՅՊԱՏԻՓ

ՀԱՏՎԱԾ «ԶԱՊԱՅԵՎ» ՎԵՊԻՑ

Բարգ. ԳՐԱԲԻՈՍ

H 1/38730



ՅԵՐԵՎԱՆ
1980

Фурманов
Три смертных приговора
Отрывок из
“ЧАПАЕВА”

Այս պատմվածքը մի փոքրիկ հատված և պրալեն-գրակ վեպանան Ֆուրմանովի հոչակավոր «Զազայնվ» վեպից։ Այդ վեպում Ֆուրմանովը նկարագրում է 25-րդ պանծալի դիվիզիայի բաջացործությունները, վորը ծնունդ եր առել և անել Մերձվոլգյան տափաստաններում։ Նա կրիվել եր բարախացիական պատերազմի բռվում։ Այդ դիվիզիայի գլուխ եր կանգնած հերոս-հրամանար Զազայեվը։

Ինքը Ֆուրմանովը յեղել է այդ դիվիզիայի ռազմական Կոմիսարը և դիվիզիայի կազմակերպիչը։ Վեպում հեղինակը համեմ և ն գալիս Յեղոր Կլիշկով անվան տակ։

Սույն քվի մարտի 15-ին լրացավ իր ուժիքի ծաղկման շրջանում վախճանված տաղանդավոր արձակագիր Դ. Ա. Ֆուրմանովի մահվան չորս տարին։

«Յերեք Մահապատժի» հայերեն հրատարակությունը քող տոկիր ծառայի կրկին վերիիշելու համար հեղափոխական գրող և բայլշիկ մարտիկ Ֆուրմանովին։

Մարտ մզելով՝ Տրիֆոնովիկա գյուղը մտավ և հանդսուի տեղավորվեց 220-րդ դունդը։ Յերբ կարմիր բանակայինները մտան գյուղի ծայրի խրճիթը, նրանց սասափի զարմացրեց հատակի վրայի արյունի բծերի առատությունը։ Հետաքրքրվեցին, սկսեցին հարց ու փորձ անել տնատիրոջ, —նա ըրում ե, ընդդիմանում ե, վաշինչ չի պատմում։ Այն ժամանակ նրան աղնիվ խոսքով խոստացան վոչ մի պատիժ չտալ, իսկ «վոր բանն ենաեղ հասավ» նաև նրա համար խնդրել իրենց հրամատարին ու կոմիտարին։ Դյուղացին առանց յերկար ու բարակ խոսալու, նրանց տարավ չարդախի տակ և տյնտեղ թրիքի կույտում, փոքր ինչ զես ու զեն տալով թրիքը, ցույց տվեց ինչ-վոր արյունաշաղախ, անձեւ, ծուկ-կարմիր բան։ —«Ահա՛»։ Մարտիկները տարակուսանքով իրաբ յերես նայեցին, և այդ անձեւ, արյունաշաղախ զանգվածի մեջ նրանք նշմարեցին մարդկային մարմիններ։ Իսկույն և յեթ սիլիններով, դանակներով, ձեռքերով ցրելով աղբակույտը, տակից հանեցին յերկու տաք դիսկակ—կարմիր բանակայիններ։

Հանկարծ գիտակներից մեկի ձեռքը շարժվեց. բըսնողները ցնցվեցին, բնաղղաբար յետ քաշվեցին, կըկին նետեցին նրան աղբակույտի վրա. . . և տեսան ինչպես ձեռքից հետո քաշվեց վոտքը, նորից բացվեց, նորից կծկվեց. . . ձըպճպաց աչքի կոողը, հազիվ բացվեց աչքն ուսած, սև պարկերի տակից, բայց մեռյալ, անտեղի փայլը վկայում եր, վոր չկային արդեն մտքեր. . . Սոսկալի գյուտի լուրը տարածվեց ամբողջ գնդում։ Մարտիկները վազում եյին տեսնելու, բայց վոչ վոք չդիտեր, թէ բանն ինչումն ե. բոլորը զանազան յենթուրություններ եյին անում, կարծիքներ հայտնում։ Սկսվեց գյուղացու հարցաքննությունը։ Նա չընդգրիմացավ, պատմեց ամեն ինչ, ինչպես յեղել եր։

Յերկու կարմիր բանակայիններ, ինտերնացիոնալ զնդի խոհաբարները, սիստմամբ այլտեղ եյին ընկել մի քանի ժամ առաջ։ Նրանք սպիտակների կողմից դրաված Տրիփոնովիկան ընդունել եյին մի ուրիշ գյուղի տեղ, վորտեղ յուրայիններն եյին։ Ծոտենալով խրճիթին,

նրանք հարցնում են, թե վորտեղ կարելի յե գտնել այս-
տեղ անտեսական մասին։ Խըճիթից դուքս թռան այն-
տեղ նստած կազակները և ճիշով հարձակվեցին շմած-
խոհարարների վրա, ցած բերին նրանց և անմիջապես
քարչ տվեցին խըճիթը։ Ակզրում ոկսեցին հարցաքննել-
ուր և վորտեղից են գալիս, տեղեկանում եյին, թե վոր-
տեղ և ինչ զորամասեր են գտնվում, ինչքան մարդ կա-
յուրտքանչյուր մասում։

Կարմիր բանակայիններին խոստանում եյին լիա-
կատար ներում, յեթե միայն նրանք կպատմեն ճշմար-
տությունը։ Ճիշտ, թե սուստ, միայն թե խոհարարները
նրանց ինչ-վոր բան ասում եյին։ Նրանք լսում եյին,
ոչք եյին առնում, շարունակում եյին հաջո ու փորձը։
Եյդպես շարունակվեց մի տասը բոպե։

— Ուրիշ վոչի՞նչ չգիտեք, —հարցրեց նստած կա-
ռակներից մեկը։

— Վոչինչ, —պատասխանեցին դերիները։

— Իսկ այս ինչ ե ձեր զդակի վրա, ա՞սող ե։ Խոր-
հրդային իշխանությունն ե նստած։ շուն շան վորդիք-
մի տես, վոնց են կպցրել…

Կարմիր բանակայինները կանգնել եյին լուռ, զգում
եյին ինչ-վոր վատ բան։ Ներկա յեղողների տրամադրու-
թյունն արագ փոխվեց։ Քանի զեռ հարցաքննում եյին,
չեյին ծաղրում, իսկ այժմ «աստղի» մասին բարձրացալ
կ' հայհոյանք և՝ սպառնալիք։ Մեկին բոթեցին կողից։

— Կաշ յեփիե՞լ ես։

— Եեփել եմ, —կամաց պատասխանեց խոհարարը։

— Բայլշեփիկներին կերակրե՞լ ես, լիրը։

— Բոլորին ել կերակրել եմ, —ավելի կամաց պա-
տասխանեց նա։

— Բոլորի՞ն, —տեղից ցատկեց կազակը… —Գի-
տենք, թե ինչպե՞ս եք բոլորին կերակրել, սրիկաներ։
Ամեն ինչ ավերել եք, ամեն տեղ պղծել եք…

Նա շատ խայտառակ կերպով հայհոյեց, տարավ ու
բերեց և ամբողջ թափով հասցրեց կարմիր բանակայինի
դեմքին։ Արյունը ցայտեց քթից… Հենց այդ եյին,
վորպես ազգանշան, սպասում։ Դեմքին հասցրած հար-
վածն արձակեց բոլորի ձեռքերը, արյան տեսքը վայր-
կյանապես առաջացրեց. վայրենի, կատաղի, արյուն-

սուշտ դրություն։ Կազմակերպ, տեղերից ցատկելով, սկսեցին կարմիր բանտկայիններին ջաբակել, ցած գլուխ-ցին նըանց, կոխուռում եյին, թքում...

Վերջապես՝ սրիկաներից մեկը մի գիշական պատիժ հնարեց։ Դժբախտներին բարձրացրին հատակից, նստեցրին աթոռների վրա, կապեցին պարաններով և սկսեցին վզի մոտից կտրատել կտոր կտորի յետեկից արյունշաղախ մարմնի շերտեր... կտրում են, վերջն ազում, կտրում են, աղում... Անտանելի ցավից սոսկալի գուռում եյին խելքները կորցրած կարմիր բանակայինները, բայց նրանց աղաղակները միայն գրգռում եր կասաղած գաղաններին։ Այդպես տանջեցին մի քանի ըուպե, կտրում եյին և աղում... Հետո մեկը խոցեց կուրծքը ալինով, նրա յետեկից՝ մի ուրիշը... Բայց գըրանց կանգնեցրին։ — Կարող ես այդպես սպանել նրանց, քիչ կտանջվեն, — ասացին... Բայց մեկին այնուամենայնիվ սպանեցին այդպես։ Մյուսը հազիվ եր շնչում՝ այդ նա յեր, վոր ահա մեռնում եր գնդի առաջ։

Յերբ Տրիփոնովկայից մի քանի ժամ առաջ սպիտակների սկսեցին շտապ նահանջել, յերկու խոշտանգված խոհաբարներին քարշ տվեցին ու թաղցրին տղբակույտի մեջ...

Յեկ ահա ամբողջ պատմությունը։

Լուս ու մոռայլ լսում եր ամբողջ գունդն այդ սոսկալի վեպը։ Խոշտանգվածներին գրին ի տես բոլորի, արին այն ամենն, ինչ անհրաժեշտ է։ Պատրաստվում եյին թաղել, տալով զինվորական վերջին պատիվը։

Այդ բովեներին յեկան ֆեղորն ու Զապայեվը¹⁾։ Նրանք հենց վոր իմացան տեղի ունեցածի մասին, հավաքեցին մարտիկներին և կարճ խոսքերով պարզաբանեցին նրանց նման դաժանության ամբողջ անմտությունը, զգուշացնելով, վոր գերիների նկատմամբ չպետք է լինի խիստ վրիժառություն։

Բայց մեծ եր կարմիր բանակայինների ցասումը, զայրութին վերջ չկար։ Խոշտանգված ընկերներին հաղնի ջեցրին, յերեք համազարկ ալին, ցրվեցին... Առավույան մարտում գերիներից վոչ մեկը չհասավ մինչև գնդի շտարը... Վոչ մի ճառ, վոչ մի հորդորանք յետ

1) Ֆեղօր Կիչկավը Դիվիզիայի սաղմանն եր, իսկ Զապայեվը՝ Դիվիզիայի հրամատարը։ Թարգմ.

չեն պահում մարտում վրեժինգրությունից . արյան
դեմ այստեղ վճարում են միայն արյունով...

Մինչև իսկ իր վրա ֆեղորն զգաց այդ պատմու-
թյան հեռավոր, բայց ակնհայտ ազգեցությունը, հա-
ջորդ որը նա ստորագրեց մահվան առաջին դատավճիռն
ուղիտուկ սպայի նկատմամբ: Այդ գեղքի առթիվ թերևս
արժեք պատմել:

Ահա թե ինչպես յեղավ այդ:

Կուտյակովի¹⁾ մոտ յեկան, Ռուսական Կոնդիդ
գյուղը: Կուտյակովն առավոտյան գրոհում այսոր վեր-
ցրել եք մի ութսուն գերի:

Գերիների վրա համարյա պահակ չկար:

— Հանգիստ յեղեք, չեն փախչի: Այժմ նրանց փայ-
տով ել ծեծես, չես կարող յետ ուղարկել Կոլչակի մոտ:
Չափից ուրս ուրախ են, վոր գերի յեն ընկել:

— Հը²⁾, ինչ ե, Կուտյակով, նորից, —հարցրեց
Ֆեղորը, գլխով գերիների կողմը ցույց տալով:

— Այս, նորից, —ժպտալով ասաց նա, —յես ուզեցի
նրանց փոքր ինչ սվիխով շոշափել, իսկ նրանք թե՝
վա'յ, վա'յ, վա'յ գերի կուզենք գալ, —ասում են, —ձեռք
մի տուք ի սեր Քրիստոսի, —դեհ, մենք ել քշեցինք
ընթիք:

— Իսկ սպանե՞ը:

— Սպաներ ել կային... Բայց չկամեցան գերի ընկ-
նել, ասացին, թե ձեզ մոտ ուրախ չե...

Կուտյակովը նշանակալից կերպով նայեց Ֆեղորի
միտ և նա այլևս չհարցրեց...

— Իսկ գուցե կըկին մնացե՞լ են:

— Գուցե, միայն թե լուսմ են:

— Իսկ զինվորնե՞ը, մի՞թե չեն հայտնում:

Գիտեք, —բացատրեց Կուտյակովը, —նրանց զին-
վորներն այստեղ խառնվել են զանազան ժամանեց, միմ-
յանց չեն ճանաչում, ինչ-վոր համալրումներ են յեկան
յեղել...

— Ապա, —գիմեց Ֆեղորը, —յեկ փորձենք միա-
սին... միայն թե առաջ յես ուզում եմ գերիների հետ
փոքր ինչ խռուել, այնպես դեսից-դենից, ամեն ինչի
մտաին քիչ-քիչ:

1) Կուտյակովը Զապայնվի գիվիգիտյում բրիգադի հրամատոր եք: Թարգմ.

Յերբ Ֆեղորն սկսեց խոսել, շատերը լսում եյին
վոչ միայն ուշադրությամբ ու հետաքրքրությամբ—
այդ քիչ ե. նրանք լսում եյին ուղղակի թերահավա-
տությամբ, խիստ մեծ զարմանքով, վոր կարելի յեր
կարդալ նրանց գեմքերի արտահայտության մեջ, շփոթ-
ված, կանդառած հայացքներում։ Պարզ եր, վոր շատ
բան նրանք լսում եյին միայն առաջին անգամ, ամենե-
վին չգիտեյին, չեյին յենթադրում, մտքներովը չեր
անցնում, այն ամենը, ինչի մասին նրանց պատմում եր
կլիչկովը։

— Այ, հիմա յես ձեզ ամեն ինչ պարզաբանեցի, —
վերջացրեց Ֆեղորը։ — Առանց չափազանցությունների,
առանց խարեյության։ Դուզբեղուզ ասացի մեր ամրող ջ
ճմարտությունը, իսկ հետո դուք ինքներդ հասկացեք,
ինչպես կուզեք. . . թե ինչն ե ձեզ համար թանգ ու մոռ-
ային, արդյոք ինչ տեսել եք ու չեք տեսել կոլչակի մոտ,
թե այն, ինչի մասին ահա յես ձեզ ասացի։ Բայց գիտո-
ցեք, վոր մեզ հարկավոր են միայն խորհրդային իշխա-
նության համարձակ, իսկական և գիտակից պաշտպան-
ներ, մեզ հարկավոր են միայն այնպիսիները, վորոնց
վրա մենք կարող ենք հույս դնել. . . Մտածեցեք։ Ենք ով
կկամմենա մեզ հետ միասին կովել, թող հայոնի, մենք
մեզանից յերբեք յետ չենք հրում այնպիսիներին, վո-
րոնք ձեզ ալես խարեյությամբ կոլչակի մոտ են ընկել. . .

Նա վերջացրեց։ Տեղացին հարցեր և՛ ուազմական, և՛
քաղաքական և՛ կարմիր բանակն ընդունելու վերաբեր-
ութ. . . Իդեալ, նրանցից կիսից ավելին մտան, վորպես
ժարտիկներ մեր շարքերը և կուտյակովը յերբեք առէթ
տնեցավ զղջալու, վոր նրանց ընդունել ե իր փառահեղ
ինդերի շարքերը։

Շարեցին յերկու տողանով։ Կլիչկովը շրջում եր.
դիտում, թե ինչպես են նրանք հադնվել, առանձին հար-
ցեր եր տալիս։ Վոմանց գեմքերը գրավվում եր նրա ու-
շադրությունը, — յերկում եր, վոր դրանք բանվորներ
չեն, կամ դյուլացի ջահելներ, նրանց մի կողմն եյին
քաշում և ապա շտարում մանրամասնորեն հայտարե-
րում նրանց ով լինելը։ Մեկն առանձնապես կասկա-
ծանքներ եր հարուցում։ Նայում եր հանդգնորեն, զայ-

բույթով և չարախինդ ծաղրով գեղի զննության և
հարցաքննության այդ ամբողջ աշխատանքը, նա կար-
ծես կամենում եր ասել.

— Ես, գորչ գրողներ, միթե դո՞ւք եք, վոր պետք ե-
մեզ հարցաքննեք:

Նա կիսով չափ հագնված եր, վորպես հասարակ
զինվոր, բայց հագուստն ել կառկածի տեղիք եր տալիս.
վարտիկն ու կոչիկներն սքանչելի եյին, իսկ չապիկն՝
անպետք, պատառուտած, յերեւում եր, վոր ուրիշի վրա-
յից ե հանած. նրա դիրք ու գեր մարմնին շապիկը գեգա-
րությամբ եր հագցրված, իսկ ոճիգը չեր հասնում խո-
զի աղղըին նմանող նրա առողջ ալ կարմիր վզին։ Դըլ-
խին դրած եր զինվորի սովորական գլխարկ, բայց գար-
ձյալ յերեւում եր, վոր ուրիշի յե, չեր սազում ամենելին,
ինքն ել չգիտեր այդ գլխարկի կրելու ձեր։ Զե, յերե-
վում եր, վոր նա հասարակ զինվոր չե։

Ֆեղորն սկզբում նրա մոտով անցավ, վոչ մի խոսք
չասաց, իսկ վերադարձին կանգ տուավ նրա դեմ և հան-
կարծ շեշտակի հարցրեց.

— Դուք սպա՞ յեք, այո՞։

— Յես, չե... վոչ, յես շարքային զինվոր եմ, —
շփոթվեց նա, — իսկ ինչո՞ւ յեք դուք կարծում։

— Այնպես, յես ձեզ ճանաչում եմ, — խորամանկո-
րեն պատասխանեց Կլիչկովը։

— Ինձ ճանաչում ե՞ք, վորտեղի՞ց, — հարցրեց նա։

— Ճանաչում եմ, — քթի տակ կրկնեց Ֆեղորը, —
բայց ահա թե ինչ, այստեղ տեղը չի շողովություններով
դրադիվելու։ Յես ձեզ մի անգամ ել հարցնում եմ՝ դուք
սպա՞ յեք թե վոչ։

— Յես մի անգամ ել պատասխանում եմ, — ուզզը-
վեց նա և բարձր պահելով գլուխը պատասխանեց—
յես սպա չեմ... .

— Դեհ, լավ, մեղքը ձեզ... .

Ֆեղորը նրան դուրս բերավ առաջ, նրա հետ միս-
ուն շարքից հանեց նաև մի քանիսին և ամբողջ խմբակով
առաջ անցավ։ Բայց նախապես նա դիմեց Կոլչակի զին-
վորներին կարճաւոտ ու ջերմ խոսքով, պատմելով ին
ինչպիսի գեր և խաղացել սպիտակ սպայությունն ա-
խատավորների կովում և ինչպես այդ սպիտակ սպայո-

թյանը հարկավոր ե վոչնչացնել, յերբ նա բայցահայտ Խորհրդային խշանության դեմ ե դուրս դալիս:

Քայլեց շարքերով, ցույց տալով խմբակին, հարցրեց, թե չի՞ ճանաչում արդյոք մեկնումեկն այս խմբակում յեղած սպաներին: Գեր պարոնին միանգամից ճանչեցին մի քանի հոգի, յերբ նրա գլխից հանեցին գրլխարկը.

— Ինչպես չե՞՝, ճանաչում ենք, սպա յե անպայտան...

Ենի հայտնեցին այն դորամասը, վորի հրամատարն եր նա:

— Ճիշտ ե, մենք նրան տեսել եյինք ընդամենը յերկու որ, բայց, դե, վոնց չենք ճանաչում... նա քիչ առաջ շապկի վիզը շատ բարձրացրեց, գլխարկն ել ցածրացրեց մինչև աչքերը, մենք ել կարգին չտեսանք. իսկ հիմա ինչպե՞ս ճանաչենք: Նա յե, վոր կա...

Զինվորները «ճանաչում» եյին նկատելի բավականությամբ: Ընդամենն այդ անդամ ճանաչել եյին մի քանի հոգու. բայց սպաներից միայն այս մեկն եր, իսկ մնացած բոլորն աստիճանավորներ եյին, զանազան ծառայողներ, վարչական անձինք...

— Հը՞՝, ի՞նչ կամեք,—դարձավ նրան Ֆեդորը:

Նա նայում եր գետնին և համառորեն լուսում եր:

— Ճի՞շտ են արդյոք ասում զինվորները, — մի անգամ ևս հարցրեց նրան Ֆեդորը:

— Այո՛, ճիշտ են ասում: Հետո ի՞նչ, — և նա, ըստ յերեռութին հասկանալով դրության լրջությունը, վորոշեց իրեն սպահել նույնպիսի գոռոտղ հանդգնությամբ, ինչ և առաջին հարցաֆննության ժամանակ, յերբ խորսում եր:

— Բայց չե՞ վոր յես ձեզ հարցրի... և զգուշացրի...

— Իսկ յես չեյի կամենում, — կտրուկ պատասխանեց սպան:

Ֆեդորն սկզբում վորոշեց նրան անմիջապես շտարն ուղարկել աստիճանավորների խմբակի հետ միասին, բայց հետո հիշեց, վոր դեռ չեն խուզարկել:

— Ապա, կարգադրեցեք սրան խուզարկել, — դեմեց նա կողքին լուռ կանգնած կուտյակովին:

— Կարգադրե՞լս վորն ե, յես ինքս իսկույն, — պատասխանեց սպան:

Յեվ նա սկսեց քըքքել իր գրպանները: Հանեց միքանի մանր-մունը իրեր:

— Ուրիշ վոչինչ չկա՞:

— Վոչինչ:

— Իսկ գուցեց ելի՞ բան կա, — հարցը կուտյակովը:

— Ասացի չկա, ուրեմն չկա, — կոպիտ ընդհատեց սպան:

Նրա այդ գոռող, արհամարհական և հանդուզն վոճը հուզում եր անչափ: Կուտյակովը հանեց մի ինչ-վոր նամակ, բացեց և հանձնեց Ֆեղորին: Ֆեղորը նամակից խմացավ, վոր սպան նախակին սեմինարիստ ե, տերտերի տղա և մի տարուց ավելի յե, ինչ կովում և Խորհրդային եշխանության դեմ: Նամակն, ըստ յերեւոյթին, նշանածիցն եր: Նշանածը զրում եր մոտակա քաղաքից, վորտեղից սպիտակներին մոտ որերս եյին դուրս քշել:

«Սպիտակները կնահանջեն կարճ ժամանակով, — գրված եր նամակում, — համբերիք... կարմիրներից սր ու արե չենք աեսնում... թող վրելի քեզ աստված, ինքու ել քեզ պահպանիր, վորպեսզի վրեժինդիր լինես բայլէնիներին»...

Մըյունը խփեց Ֆեղորի գլուխը:

— Բավական ե... տարե՛ք, — զոչեց նա:

— Գնդակահարե՞լ, — շեշտակի և սոսկալի պարզությամբ հարցը նրան կուտյակովը:

— Այո՛, այո՛, տարե՛ք...

Սպային տարան: Յերկու ըոպե անց լսվեց համադարելի ձայնը. նրան գնդակահարեցին:

Մի ուրիշ ժամանակ Ֆեղորը, յերեկ, այլ կերպ վարվեր, բայց այս անգամ նրա մտքից չեր հեռանում խոշտանգած կարմիր բանակայինների յերկու դիակը, կտրատած մասի շերտերով, աղած խոր վերքերով...

Հետո՝ այդ համառությունը, հանդուզն-գոռող սպայական վոճը և վերջապես՝ նշանածի նամակը, վորին ակնհայտ ճշտությամբ տալիս եր սպա-փեսացուի պատկերը...

Կլիքկովն անհանդիստ եր. ամբողջ որը նա մոայլ եր տրամադրված, չեր ժապում, չեր կատակում, շատ

քիչ եր խոսում եւ այն ել դժկամակությամբ, աշխատում եր ամբողջ ժամանակ մնալ մենակ. . . բայց միայն առաջին որը, իսկ առավոտյան՝ կարծես վոչինչ չեր պատահել: Յեկ տարորինակ ել կլիներ ճակատում յերկար տանջվել այդպիսի վերապրումներով այն ժամանակ, յերբ ամեն որ, ամեն ժամ տեսնում ես ցնցող, սոսկալի պատկերներ, յերբ զոհերը մեկը չեն, այլ՝ տասնյակ, հարյուրավոր, հազարավոր . . .

Պատերազմի արյունալի հետքերը, — ծվատված դիսկեներ, խեղված մարմիններ, հրդեհված գյուղեր, դուրս նետված ու սովոր մեսնող բնակիչներ, — արյունալի այդ հետքերը, վորոնցով և դեպի վորոնց կրկին ու կրկին քայլում երանակը, թույլ չեն առ յերկար ժամանակով տանջվելու պատերազմի հազարավոր մոայլ պատկերներից միայն մեկով: Նրանք մի պատկերը ծածկում են, փոխարինում նորերով: Նույնպես եր և ֆեղորի հետ. նա արդեն ներքուստ հանգիստ եր հիշում, վոր յերեկ միայն առաջին անգամ հրամայեց մարդ դնդակաբեկ . . .

— Քեզ համար արտասովոր բան ե, — ծիծաղում եր Զապայելը, — իսկ վոր քեզ հետ լինեցիր 1918 թվին . . . ինչպե՞ս կանեցիր առանց գնդակահարությունների: Գերի յես բռնում սպաներին, իսկ նըանց վրա հսկելու մարդ չկա. յուրաքանչյուր մարտիկ հաշվով ե. դրույի պետք ե գնան և վոչ թե ուղեւեցնեն գերիներին: Ամբողջ խմբով ել վերջացնում եյինք: Ասենք, հաշիվը մեկ ե, միթե՞ն նրանք մեզ խղճում եյին. վոնց չե՞ . . .

— Իսկ դու քո առաջին դատավճիռը հիշո՞ւմ ես, Զապայել.

— Գուցե առաջինն ել չե, բայց գիտեմ, վոր դժվար եր . . . Այստեղ միշտ ել դժվարն սկսելն ե, իսկ հետո սովորում ես . . .

— Ինչի՞ն, սպանելո՞ւն:

— Հա՛, — սպարդ պատասխանեց Զապայելը, — սպանելուն: Այ, թեկուզ վերցնենք, որինակի համար. դալիս ե դպրոցից վորեւ մի հեծելակ: Նա այսպես ել, ոյնպես ել, հրաշալի թրհատում ե: Բայց, ի հարկե, ոդում մեծ ճարպիկությամբ ե թրահատում սրիկան, չա-

փաղանց ճարպիկ եւ Բայց հենց վոր հարկավոր եւ խփել մարդուն, մեկ եւ տեսար կորավ ամբողջ վարպետությունը, մեկ-յերկու անգամ բանի պետք չե... իսկ վոր վարժվում եւ, արդեն վոչինչ: Միշտ առաջին անգամն այն չե...

Խոսեց Ֆեղորը և մյուս կոփված մարտիկների հետ: Բոլորն ել միաբերան հաստատում եյին, վոր ինչպիսի նյարդեր ել մարդ ունենա, ինչպիսի սիրտ ել ունենա առաջին անգամ, յերբ հարկավոր եւ խոցել, թրահատել, հրաման տալ գնդակահարության մասին, կամ անձամբ գնդակահարել, միշտ ել մարդ իրեն վատ եղաւում, շրջությունը պատճեռազում եւ, զղջում եւ, բայց հետո, մանավանդ պատերազմում, վորտեղ ամբողջ ժամանակ արյան հոտ եղալիս, մարդու զգացողությունն այդ ուղղությամբ բթանում եւ, և հակառակորդի վոչնչացումն, ինչ ձևով ել լինի, համարյա մեխանիկական բնույթ ել կրում:

— Գիտե՞ս վոր իմ վեստավոյ Ստյոպկինը նույնպես գնդակահարված եւ, — դիմեց կուտյակովը Ֆեղորին, — Հրամանն ել ինքա եմ այդ մասին ավել:

— Այսինքն, ինչպե՞ս թե գնդակահարված եւ, — զարմացավ Ֆեղորը:

— Այ թե ինչպես...

Յեվ կուտյակովը պատմեց, թե ինչպես Ռոբալյան ճակատում Ստյոպկինին քիչ եր մնում գնդակահարում էյին:

— Նա գնդացրի վրա յեր նստել, — պատմեց կուտյակովը, — յավ վստահելի տղա յեր, ինչպես և բոլորը: Իսկ մի ինչվոր գյուղում, տեսնեմ, բերում են. կին եւ, ասում են, բռնաբարել: Կացեք, տղերք, տում եմ, — ճի՞շտ ե այդ արդյոք. այստեղ բերեք կնոջը, հարցաքըննենք: Իսկ դու, Ստյոպկին, մնա, միասին պետք եւ հարցաքննեմ: Նստել ե Ստյոպկինը լուռ: Հարցնում եմ՝ միայն գլխովն ե տմբումբացնում ե մռուցնում: Իսկ մի անգամ ել, յերբ հենց կինը պետք եղար — «Ճիշտ եւ, ասում եւ, յեղել ե»... Այդ բոպեյին կինը ցցվեց շեմքին: Վոչինչ, լավ ճաշակ ե ունեցել, ջոկել ե մի քաննհինգ տարեկան, առողջ կազաչկա: Կոմիսարն ե յեկել, բոլորը հավաքվել են: Վոչինչ, ասում են, անել չի կարելի. Ստյոպկինին պետք ե գնդակահարել, վորպեսզի ուրիշ-

ներն որինակ չվերցնեն... Այստեղ կարմիր բանակն է պալիս, իսկ կանանց և բռնաբարում. դրա համար, ուղես, չուզես վերջը պետք է մեկ լինի... Ասենք, զեազեր պատճել են, վոր վերջացրել ենք մերոնց: Ինչով է Ստյոպկինը նրանցից ավելի բախտավոր: Թե վոր ներենք, մտածում ենք մենք, դուրս կրա, թե արեք, տըզերք, ինչ ուզում եք, մինենույն է պատիժ չի լինելու: Հենց վոր մտածում եմ, պարզ ե ամեն ինչ, բայց վոր նայում եմ Ստյոպկինի վրա, մեղքս ե դալիս, յերթեցամն ել վոսկի տղա յե... իսկ կոմիսարն արդեն հրամայել եր զորախմբում: Յեկել են, թե՝

— Ո՞ւմ պետք ե տանել այստեղից...

— Սպասեցե՞ք, զեռ հարցաքննում ենք,— ասում եմ, — բռնաբարե՞լ ես, Ստյոպկին, խոստովանվիր:

— Ե, բայ յես չեմ խոստովանվո՞ւմ, — ասում ե:

— Ինչո՞ւ այդ արիք, — զոչում եմ նրան:

— Շա՞տ դիտեմ, — ասում ե, — չեմ հիշում...

— Իսկ գիտե՞ս, Ստյոպկին, թե ինչ ե քեզ սպասում

դրա համար:

— Զգիտեմ, ընկեր հրամատար...

— Ախր քեզ ստիպված ենք գնդակահարել, հիմարի գլուխ, — գնդակահահարել...

Իսկ նա այնքան կամաց պատասխանում ե.

— Կամքը ձերն ե, ընկեր հրամատար, վոր այդպես ե, ուրեմն այդպես ե ելլ...

— Զի կարելի քեզ չդնդակահարել, Ստյոպկին, — համոզում եմ նրան, — դու ինքդ ալետք ե հասկանաս, վոր ամբողջ գյուղը մեղ խուլիգան կանվանի... Յեվ, ի հարկե, տեղին կլինի... վորովհետև ինչ կարմիր բանակ ենք մենք, յեթե կանանց վրա յենք հարձակվում:

Կանդնած ե, լուռ, գլուխն ավելի ցած ե խոնարհում:

— Թե վոր քեզ ներենք, ուրեմն ամեն մեկին ել պետք ե ներենք. այդպես ե, չե՞— հարցնում եմ նրան:

— Դուրս ե դալիս, վոր այդպես ե:

— Հասկացա՞ր ամեն ինչ, — ասում եմ:

— Հասկացա, ընկեր հրամատար:

— Ախ, Ստյոպկին, գրողի բաժին լինես, — բար-

կացա յես:— Ախր ինչիդ եր պետք քեզ այդ կինը: Կնըս-
տեյիր գնդացրասայլիդ վրա ու վոչ մի փորձանք չեք դա
դլիսիդ... թե չե, դե առ քեզ...

Ծոծրակն ե քորում, լուռե: Դիմում եմ կնոջը.

— Ասա, տեսնեմ ինչպես պատահեց:

Շատ ճարտար կին ե յերեւում, սիրում ե խոսալ.

— Ինչպես պետք ե պատահեր: Ձեռք դցեց. յես
ծվում եմ, յես նրա մոռուառ մոռութին թքում եմ, իսկ
նա հո, մի բոյը տեսեք... ո՞ւժ կպատի նրա դեմ...

— Ուրեմն:

— Հենց ուրեմն, — ասում ե:

— Մենք ուզում ենք նրան պատժել, — ասում եմ:

— Այդպես ել այդ սրիկային պետք ե, — կչէշաց
կինը:— Տես թե անպետք մոռութը վոնց ե ցցել... Մի լով
բուրդը դզեք, վոր իմանա...

— Ձե յե՛. բուրդ դզել չի. մենք ուզում ենք նրան
գնդակահարել...

Կինը կանգնած տեղից նստեց, բացեց բերանը,
չոեց աշքերը, տարածեց ձեռքերը...

— Այո, այո գնդակահարել ենք ուզում, — կրկնում
եմ յես:

— Ախր վո՞նց թե յե՛, — գոչեց նա, — տառված իմ,
տեր իմ, ինչպես կարելի յե մարդուն անմեղ տեղը սպա-
նել, այս ի՞նչ ե, տեր իմ, — շփոթվել ե, պատվում ե
սեղանի շուրջը, լաց ե լինում կինը:

— Ինքո գանդատվեցիր, հիմա ուշ ե, — ասում եմ:
Նա թե՝

— Ի՞նչ եմ գանգատվել, — ասում ե, — յես սկի
գանգատվել եմ... Յես մենակ ասել եմ, թե վազեց յի-
տեիցս... ուզում եր հասնել, բայց չհասավ...

— Բաս ուրեմն...

— Ուրեմն այն, վոր չհասավ: Իսկ այդ լիբրն ինչ
եր ուզում անել, շա՞տ գիտեմ, — ասում ե, — ի՞նչ եմ
իմանում, թե նա ինչ եր ուզում, յես հո նրա դլիսի մեջը
չեմ մտել, վոր մտքինն իմանայի...

Նայում եմ կնոջ յերեսին. տեսնում եմ, վոր ստում
ե, բայց չեմ կանգնեցնում. Թող սաի, զուցե ե իսկա-
պես, Ստյոպկինը վողջ ե մնում... Միայն թե ինքը

գյուղում չաղմկի ու մեղ չխայտառակի: Իսկ թե նրանք այնաեղ ի՞նչ են արել. թքած, շատ հարկավոր եւ Գուցե Հենց կինն ինքն ել ուրախ եւ յեղել: Թե վոր լալիս եւ ու խնդրում, մտածում եմ, ուրեմն ամբողջ գյուղում առելու յեւ, վոր ստել եւ, Ստյոպկինի վրա ուզեցել եւ շատ դցել: Յես ել վրա յեմ տալիս:

— Դե բավական եւ, — ասում եմ, — այստեղ ամեն ինչ պարզ եւ եւ նրան հարկավոր եւ տանել...

— Ո՞ւր տանել — ճղճղում եւ կինը, — Յես նրան ձեղ չեմ տա, վոր մի տեղ ել եւ տանեք, այ թե ինչ...

Յեկ մեկ ել վազեց, ընկավ Ստյոպկինի վրա, դրկեց, փաթաթվեց, լալիս եւ ու գրա հետ միասին հայհոյում նրան, տեղից չի շարժվում, գողում եւ տերեկի պես:

— Կարող եյիր գու նրան վրկել, բայց յերևի ինքը ել չուզենաս... Այ յերկու տարի յեւ, ինչ մարդ չունես, բայց ինձորի պես կարմրաթուշն ես... թե վոր ուզենայիր սրան տոնել, գուցե... բայց չե...

— Դրան տոնե՞մ... չե՛, չե՛, յես չեմ ուզում մարդու գնալ:

— Դե վոր չես ուզում, — ասում եմ, — մենք մեր գործը պետք եւ տեսնենք, — եւ վեր եմ կինում աթոռից, կարծես պատրաստվում եմ գնալ...

— Ախր դա խկի չի յել պսակվի, — ճշում եւ լացակամած կինը, — նա յերեկ աստծուն ել չի հավատում, — խկ ինքը բաց չի թողնում Ստյոպկինին, պինդ փաթաթվել եւ նրան:

Խոկ նա հորթի պես կանգնել եւ լուռ, չի շարժվում, կարծես խոսքն ամեննեին իրան չի վերաբերում:

— Դե, ինչպես կուզեք, — պատասխանում եմ յես, — միայն թե ասացե՞ք միանգամից՝ հաշովում եք, թե չե՞ք հաշտվում:

Կինը արձակեց ձեռքերը, բաց թողեց իր փեսացուին եւ հետո ամբողջ յերեսով մեկ մինչև ականջները ժըստաց...

— Կովելու ի՞նչ ունենք վո՞ր, — պատասխանեց:

Ստյոպկինն ել սկսեց ծիծաղել, հասկացավ բանն ինչումն եւ, ինչպես շուռ տվեցինք գործը:

Վորապեսզի այլես վոչ մի խոսակցություն չինի, մենք յերկուսին ել դուրս արեցինք խրճիթից, — նորապսակներն այլես անելու բան չունեցին այդտեղ: Բոլորն ել կանգնած են սեղանի մոտ, ծիծաղում են նրանց յետեից, զանազան խորհուրդներ են տալիս: Յեվ այլ յերեկո Ստյոպկինը կնոջ տեր դարձավ...

Իսկ առավոտյան կանչում եմ նրան և ասում.

— Ահա թե ինչ, Ստյոպկին. Հիմար տեղովդ մենք քեզ պսակեցինք, բայց վաղը յերթի յենք դուրս գալիս: Տես կնկանդ յետեկիցդ քարշ չտաս: Իսկ քեզ, քո մեղքը քավելու համար, քեզ խնդիր եմ տալիս. արծանացիր պարզեցի: Հենց վոր մարտ յեղավ, պարզեք ովետք ե վաստակես, յեթե վոչ, յես քեզ յերբեք չեմ ների. առաջին պատահած դեպքում յես քեզ սրիկա կանվանեմ...

— Լսում եմ, — ասում ե, — կարժանանամ...

— Յեվ ի՞նչ, արժանացա՞վ, — հարցրեց Ֆեղորը:

— Ինչպես չե: արծաթի ծխախոտատուփի. մախորկա յել լցնում մեջը... Սյնալիսի մի գործ արավ, վոր միանդամից յերկու հարյուր գերի ընկավ մեր ձեռքը. և այդ՝ նրա զնդացրի շնորհիվ. վոտն ել այդտեղ ջարդեցին, ուղարկեցին ապաշար վաշտը... Յեվ ուղարկվեց ինձ մետ. թրե ե գալիս հիմա...

— Իսկ ի՞նչ յեղավ կինը:

— Ինչ պետք ել լիներ, — ժամանակովը, — ամբողջ յերեկոն նստեց կնոջ կողքին. նա յել թխված քներ պատրաստեց նրա հետ դնելու համար...

— Իսկ հարսանի՞քը, — ծիծաղեց Ֆեղորը:

— Բան չունե՞ս, — ասաց Կուտյակովը, — այդ մասին նրանց մոտ խոսք անդամ չկար, ինչ հարսանիք: Կինն իրեն բարերար եր համարում. նստած ամբողջ ժամանակ պատմում եր, թե ինչպես ազատեց նրան մահից. իսկ Ստյոպկինն ուտում եռ խմում չորսի տեղ, սուս ե անում կամ ցանցառություններ ե դուրս տալիս... Իսկ առավոտյան, յերբ պետք ե դուրս գայինք, ճիշտ ժամին հասավ...



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220038730

(054)

A 38730